*Վիպասանութեանս հեղինակը գիտէ թէ Լովցիք «ընական Անեցիք են»* (202). *Սիմէոն Լովի նկարագրութեան մէջ կը գրէ* (*Ուղ.* 346). *«եւ ասին թէ յԱնիու եկած են տեղացս Հայք... եւ այս չեն նախատինք, եթէ են Անեցիք...»*:

*«Եւ չգիտեն զլեզուս հայկեան,*
*Եւ զինչ կարդան չի հասկանան»* (202):

*Սիմէոն կը գրէ. «Եւ Լովայ Հայքն հայնակ չի գիտեն, այլ լէհնակ եւ խրչակնակ զրուցեն, որ է թաթրի լեզու»* (*Ուղ.* 346):

*«Ով եղկելի Նիկօլ Թերի,*
*Նըմանեցար* Պօղ Երիցի,
*կամ* Վասակայ *չար իշխանի,*
*եւ այլ բազմաց* ուրացողի» (209):

*Յիշատակարանին մէջ կը գրէ Սիմէոն. «զի առաւել եղեւ սա* (*Նիկոլ*) *հակառակ Հայոց քան զՊօղ Էրէցն եւ զուրացողն Վասակ»*:

*Վիպասանութեան հեղինակը Յովհ. Խուլի համար կը գրէ.*

*«Մեր մեղքն եբեր քաղաք Լովի»* (311).

*Սիմէոն Յիշատակարանին մէջ կը գրէ Մելիքսեդեկ կաթողիկոսի համար. «յորժամ եբեր զնա մեր մեղքն ի Լով»*:

*«Անգիտ գրեանքն որ Լով կային*
Սրայ խազնիցն *եղեալ էին»* (214):